

## ՀԱՏՈՒՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Եթե հայտը լրացնելիս մագիստրատուրայի դիմորդը նշել է հատուկ կարգավիճակ, ապա նախքան ուսման վարձի վճարումը պետք է ԵՊՀ ընդհանուր բաժնի միջոցով մագիստրատուրայի բաժին ներկայացնել դիմում և կցել լրացուցիչ փաստաթղթեր.

### 1. Զոհված ազատամարտիկի երեխա

- Տեղեկանք՝ զինծառայող ծնողի զոհվելու մասին (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)
- Ծնողի մահվան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)
- Դիմորդի ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)

### 2. Հաշմանդամություն

- Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)
- Տեղեկանք՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ լինելու մասին (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)

### 3. Ծնողական խնամքի բացակայություն

- Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)
- Առանց ծնողական խնամքի մնալու մասին հաստատող փաստաթղթերը (բնօրինակը և պատճենը՝ 1 օրինակ)